ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2015 թվականի գնումների առանձին գործարքների մոնիթորինգի արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2016

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 3

1. ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ..... 4

2. ԴԻՏԱՐԿՎԱԾ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ..... 7

3. ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 8

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով)՝ համաձայն 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշման №1 հավելվածով հաստատված՝ հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգի՝ իրականացրել է «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև ընկերություն) գնումների առանձին գործարքների մոնիթորինգ:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է գնումների գործընթացի՝ հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջներին (այսուհետ՝ լրացուցիչ պահանջներ) համապատասխանությունը գնահատելու նպատակով: Հարկ է նշել, որ հանձնաժողովի կողմից կարգավորվող ընկերությունների գնումների գործընթացի կարգավորման և դրա հետագա մոնիթորինգի նպատակը ընկերությունների կողմից լիցենզավորված գործունեության իրականացման նպատակով ծախսվող միջոցների արդյունավետության բարձրացումն է, քանի որ դրանք անմիջական ազդեցություն ունեն սակագների վրա: Այդ առումով առանցքային է գնումների բոլոր գործարքներում (անկախ ընտրված գնման ընթացակարգերից) հատուցման դիմաց արժեք ստանալու սկզբունքի ապահովման ուղղությամբ ընկերության կողմից ձեռնարկված քայլերն ինչպես մինչև գնումների իրականացումը՝ պլանավորման փուլում, այնպես էլ գնումների իրականացման ընթացքում և արդեն իսկ ձեռք բերված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ընդունման փուլերում: Ընդ որում, հարկ է նշել, որ ոչ միշտ են ընկերությունների կողմից իրականացվող մրցակցային գնման ընթացակարգերն ապահովում հատուցման դիմաց արժեք ստանալու սկզբունքը, քանի որ նույն ժամանակ ընկերությունների կողմից կիրառվում են այլ սահմանափակումներ, որոնք խաթարում կամ վատթարացնում են մրցակցությունը:

Սույն վերլուծական տեղեկանքում փորձ է արվել գնումների առանձին գործարքները դիտարկել վերը նշված բոլոր գործոնների համատեքստում, ինչպես նաև ներկայացնել համապատասխան առաջարկություններ դրանց հետագա բարելավման նպատակով:

Այդ նպատակով, պատահական ընտրանքի միջոցով ընտրվել են 2015 թվականին իրականացված 10 գործարքներ (գործարքների թվում ներառված է նաև 2014 թվականին իրականացված 1 գործարք), որոնք դիտարկվել են տարբեր տեսանկյուններից, մասնավորապես.

1) ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության մոնիթորինգ և գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության մոնիթորինգ,
2) մրցութային փաստաթղթերի մոնիթորինգ,
3) մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգ,
4) գնման պայմանագրի և դրա կատարման մոնիթորինգ:

Գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է հիմնվելով ընկերության կողմից հանձնաժողով ներկայացվող գնումների վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունների, գնումներին վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրության, ինչպես նաև հանձնաժողովի աշխատակազմի կողմից կատարված դիտարկումների արդյունքների հիման վրա:

Վերլուծական տեղեկանքում ներկայացված են ընկերության 2015 թվականի գնումների ընդհանուր նկարագիրը, դիտարկված գործարքների մասին ամփոփ տվյալները, դրանցից յուրաքանչյուրի վերլուծության արդյունքները և ամփոփիչ եզրակացությունները:

1. ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ն 2015 թվականի ընթացքում իրականացրել է 1,4 մլրդ դրամի գնումներ (առանց ԱԱՀ): Գնումներն իրականացվել են

ինչպես ապրանքների, այնպես էլ աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման նպատակով: Ընդհանուր գնումների ծավալի 75%-ը (1 049,6 մլն դրամ) բաժին է ընկել աշխատանքներին և ծառայություններին, իսկ 25%-ը (3,5 մլն դրամ)՝ ապրանքներին: Գնումների իրականացման նպատակով ընկերության կողմից կիրառվել է երեք ընթացակարգ՝

- ✓ մրցույթով իրականացված գնումներ,
- ✓ միակ աղբյուրից իրականացված գնումներ,
- ✓ ոչ կանոնակարգված գնումներ:

Ընկերության կողմից 2015 թվականին իրականացված գնումների ծավալի բաշխումը նշված ընթացակարգերի միջև ներկայացված է ստորև՝

ԳՐԱՖԻԿ 1

2015 թվականի փաստացի կատարված գնումների ծավալն ըստ ընթացակարգերի



Ներկայացված գրաֆիկական պատկերը ցույց է տալիս, որ «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ն մրցակցային եղանակի կիրառմամբ իրականացրել է գնումների 40%-ը, իսկ ոչ մրցակցային եղանակի կիրառմամբ՝ 60%-ը:

Գնումների գործարքների բաշխումն ըստ ընթացակարգերի առավել մանրամասն դիտարկված է ստորև՝ ըստ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների:

ԳՐԱՖԻԿ 2

2015 թվականի փաստացի կատարված գնումների ծավալն ըստ ընթացակարգերի՝ ապրանքների դեպքում



ԳՐԱՖԻԿ 3

2015 թվականի փաստացի կատարված գնումների ծավալն ըստ ընթացակարգերի՝ աշխատանքների և ծառայությունների դեպքում



Ինչպես տեսնում ենք Գրաֆիկ-2-ից ապրանքների դեպքում ոչ մրցակցային եղանակի կիրառմամբ իրականացրել է գնումների 59%-ը, իսկ մրցակցային եղանակով՝ 41%-ը, իսկ աշխատանքների և ծառայությունների դեպքում՝ Գրաֆիկ 3, ոչ մրցակցային եղանակով իրականացված գնումները կազմել են 82%, իսկ մրցակցային եղանակով՝ 18%:

Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների դեպքում ոչ մրցակցային եղանակով իրականացված գնումների ծավալը գերակշռում է և այդ առնչությամբ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել նման գնումների ծավալն էականորեն նվազեցնելու ուղղությամբ:

2. ԴԻՏԱՐԿՎԱԾ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Մոնիթորինգի իրականացման նպատակով ընկերության 2015 թվականի ընթացքում կատարված գործարքներից պատահական ընտրանքի միջոցով հանձնաժողովն առանձնացրել է 9 առանձին գործարք և 2016 թվականի մարտի 25-ի ՇԿ-444Ձ գրությամբ խնդրել է «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ին ներկայացնել նշված գործարքների հետ կապված մրցութային փաստաթղթերը: Հարկ է նշել, որ ընտրված 9 գործարքներից 7-ը մրցութային, իսկ 2-ը ոչ կանոնակարգված գնումների ընթացակարգերով իրականացված գործարքներ են:

Հանձնաժողովի կողմից 2015 թվականի ընտրված և դիտարկված գործարքների ընդհանուր արժեքը կազմել է 290,5 մլն դրամ: Այսինքն՝ հանձնաժողովի կողմից ուսումնասիրված գործարքները կազմել են ընկերության ընդհանուր գործարքների շուրջ 21%-ը: Բացի վերը նշված գործարքները, դիտարկվել է նաև 2014 թվականի 3-րդ եռամսյակի ևս մեկ գործարք՝ 36 457,9 հազ. ԱՄՆ դոլար արժեքով: Ստորև գրաֆիկական պատկերի տեսքով ներկայացված են դիտարկված գնումների գործարքների համամասնություններն ըստ ընթացակարգերի:

ԳՐԱՖԻԿ 4



	ընդամենը	մրցույթ	ոչ կանոնակարգված
Դիտարկված առանձին գործարքներ (մլն դրամ)	290.5	276.5	14.0
Փաստացի կատարված գործարքներ (մլն դրամ)	1 401.8	561.9	277.8

Վերը նշված համամասնություններից կարելի է ենթադրել, որ իրականացված մոնիթորինգի արդյունքները կարող են բնութագրական լինել ընկերության մրցակցային գնումների մեծամասնության համար:

3. ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

<u>Մոնիթորինգի իրականացման հիմքը</u>՝ Հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշման №1 հավելվածով հաստատված՝ հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգ:

<u>Մոնիթորինգի օբյեկտը</u>՝ «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ:

<u>Մոնիթորինգի նպատակը՝</u> «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կողմից կատարված գնումների առանձին գործարքների արդյունավետության ուսումնասիրություն և հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջներին համապատասխանության գնահատում:

<u>Մոնիթորինգի իրականացման ժամկետը՝</u> 2016 թվականի հուլիսի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 1-ը:

<u>Մոնիթորինգի մեթոդաբանությունը՝</u> «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության, գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգի միջոցով:

<u>Մոնիթորինգի առարկան՝</u> «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կողմից իրականացված գնումների առանձին գործարքները, մասնավորապես՝

1. «Արզնի ՀԷԿ»-ի կարիքների համար 7OPzS 490 Ա/ժ–118 տարր արդյուբերական կուտակիչ մարտկոցների ձեռքբերման» ոչ պլանային մրցույթ,
2. «Արգել ՀԷԿ»-ի թիվ 4 հիդրոագրեգատի նորոգման» մրցույթ,
3. «Արգել ՀԷԿ»-ի ճնշման խողովակաշարի 5-ից մինչև 6 անկերային հենարանների հատվածում՝ 4 գծերի ներկման, խողովակաշարի տաշտակի մաքրման և նորոգման» մրցույթ,
4. «Հրազդան ՀԷԿ»-ի թիվ 3 դերիվացիոն ջրանցքի նորոգման» ոչ պլանային, ոչ կանոնակարգված գնում,
5. «Քանաքեռ ՀԷԿ»-ի թիվ 6 հիդրոագրեգատի նորոգման» մրցույթ,
6. «Հրազդան ՀԷԿ»-ի դերիվացիոն ջրանցքների վերակառուցման» մրցույթ,
7. «ՀԷԿ-ի անխափան աշխատանքների ապահովման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման» ոչ կանոնակարգված գնում,
8. «Քանաքեռ ՀԷԿ»-ի 10 կՎ դողային կամրջակի մեկուսիչների փոխարինման» մրցույթ,

9. «Երևան ՀԷԿ-1»-ի վերականգնում՝ ներառելով հիդրոտուրբինային սարքավորումներ, էլեկտրատեխնիկական սարքավորումներ, ՏԳԿԱՀ, «Երևան ՀԷԿ-1»-ի կայանի հանգույցի կառույցների և շինությունների վերականգնման» մրցույթ,
10. «Քանաքեռ ՀԷԿ»-ի ՍԿՏ-2 մուտքի բջջի սարքավորումների փոխարինման» մրցույթ:

Գնումների առանձին գործարքների մոնիթորինգի արդյունքների համաձայն ընկերությունը մրցույթների կազմակերպման ընթացքում գնման ընթացակարգերի փաստաթղթերը և ապրանքների տեխնիկական բնութագրերը կազմել է պատշաճ մակարդակով:

Միևնույն ժամանակ, ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ վերոնշյալ 10 գործարքներում «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ն գնումների իրականացման ընթացակարգերը կազմակերպել է որոշակի թերություններով: Մոնիթորինգի ընթացքում ի հայտ են եկել տարբեր բնույթի խնդիրներ, որոնցից յուրաքանչյուրն իր բացասական ազդեցությունն է թողել գնումների ընդհանուր արդյունավետության վրա: Ի հայտ եկած հիմնական թերությունները ամփոփ ներկայացված են ստորև.

1. Ընկերությունը չի ներկայացրել մինչև մրցույթի անցկացումն իրականացված շուկայի ուսումնասիրության արդյունքները: Անկախ որևէ հանգամանքից, մինչև գնումների իրականացումը հանրային կազմակերպությունները պետք է կատարեն շուկայի ուսումնասիրություններ և յուրաքանչյուր դեպքի համար հիմնավորեն գնումների ընթացակարգի ընտրությունը:

   Անհրաժեշտ է փաստաթղթավորել շուկայի ուսումնասիրության գործընթացը և գնումները պատշաճ կազմակերպելու նպատակով սահմանել շուկայի ուսումնասիրության գործընթացը կարգավորող ներքին ընթացակարգ:

2. Մրցույթներին տնտեսվարող սուբյեկտների մասնակցությունը հիմնականում չի գերազանցել երկու մասնակիցը:

Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ առաջարկվում է հետագայում մրցույթներին առավել բարձր մասնակցություն ապահովելու նպատակով մասնակցության հայտեր ուղարկել կամ տեղեկացնել բոլոր պոտենցիալ մասնակիցներին՝ չսահմանափակվելով մրցույթն ընկերության ինտերնետային կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկատուում հրապարակելով:

3. Մրցութային հայտերի գնահատման չափանիշներում առկա են անհամապատասխանություններ: Սակայն, հարկ է նշել որ, դրանք մրցույթի արդյունքների վրա ազդեցություն չեն ունեցել:

Վերը նշված խնդիրները վկայում են, որ «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի գնումների գործընթացը բարելավման կարիք ունի: Անհրաժեշտ է համապատասխան միջոցառումներ ձեռնարկել՝ գնումների գործընթացի արդյունավետության բարձրացման և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների պահպանման ուղղությամբ:

Հավելենք նաև, որ համաձայն հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների, գնումների գործընթացի թերի կազմակերպման արդյունքում շուկայականից բարձր գներով ձեռք բերված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքները (շուկայական գները գերազանցող չափով) հաշվի չեն առնվի ընկերության սակագներում: